




Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ՍԵՊՏԵԲԵՐԻ 2021թ. թիվ 6 (27)

ԱՆԿԱԿՈՒՅՈՒՆԵ ԵՎ ՊԵՏԱԿԱԿՈՒՅՈՒՆԵ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԱՐՃԵՔ ԵՆ

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆՔ ԱՆԿԱԿ ԵՎ ՀՁՈՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Մեր պարտությունը արցախյան վերջին պատերազմում ցույց տվեց, որ անկախությունը մեր ժողովրդի գերագույն արժեքն է: Հայրենիքի փրկությանը մասնակցում էին ոչ միայն պայմանագրային ծառայողները, այլ նաև կամավորներից կազմված խմբերը: Նրանք պաշտպանում էին Վահան գյուղում տեղակայված դիրքը և Քառվաճառի դիրքերը:

Նրանց մեջ էր նաև Կարինյան Սպարտակը: Թեկուզ առողջակամը չէր ներում, բայց մա առաջիններից էր, ով հենց առաջին օրը կամավորագրվեց և մեկնեց դիրքեր: Կարինյանները մեծ հարգանք են վայելում իրենց գյուղում՝ Գետիկում /ճամբարակի տարածաշրջան/: Նրանք զբաղվում են անասնապահությամբ, չնայած որ Սպարտակը ավարտել է բուհի հոգեբանության բաժինը և կատակով ասում է, որ հոգեբանորեն է մոտենում իր գործին: Նրա պատերազմ մեկնելուց հետո ընտանիքի հոգսն ընկնում է տան անդամների վրա:

Մայրը՝ տիկին Անժելան և հարսը՝ Ազգանուշը, առանց վարանելու և հաշվի չառնելով դժվարությունները, սկսում են վարել իրենց տնտեսությունը, ինչպես անում էր որդին: Քանի որ բեր-



քաժապարի ժամանակ էր, նրանք մեծ դժվարությամբ, բայց պատվով կարողանում են հաղթահարել թե՛ հոգեբանական և թե՛ ֆիզիկական ընկճվածությունը: Նրանք զբաղվում էին ոչ միայն կենցաղային հարցերով, այլև կարողանում էին իրենց ստեղծած ուղարկել տղաներին, ովքեր պաշտպանում էին մեր սահմանները: Նրանք, մեկը մյուսից թաքուն արտասվելով, բայց միևնույն ժամանակ միմյանց խրախուսելով, պայքարում էին, որպեսզի թիկունքում ևս

խաղաղություն տիրեր: Տիկին Անժելան ծպտալով ասում էր, որ իրենց փոքրիկ խանութում, որը դարձել էր հավաքատեղի, կազմակերպում էին և դիրքեր ուղարկում թե՛ սնունդ, թե՛ հագուստ: Տիկին Ազգանուշը հպարտությամբ էր խոսում և չէր տրտնջում, որ նույնիսկ տղամարդու գործ է կատարել:

-Ես սիրում եմ իմ հայրենիքը և պատրաստ եմ ցանկացած գործունեության, միայն թե ապրենք խաղաղ և զարգացած երկրում: Օտար երկրում մենք անելիք չունենք, մենք պարտավոր ենք ապրելու և արարելու մեր հայրենի հողում: Դրա համար մենք պետք է աշխատենք, լավ կրթական համակարգ ստեղծենք, կարողանանք մեր ինքնուրույնությունը պահել: Չեմ ավստում, որ թիկունք թիկունքի պայքարել են ամուսնուս հետ, քանի որ դա իմ պարտքն է, միգուցե դա նույնպես նրան թև ու թիկունք էր տալիս: Պայքարի միջոցով կարող ենք պաշտպանել մեր անկախ հայրենիքի ազատությունը: Ես շնորհավորում եմ մեր ժողովրդին Հայաստանի Հանրապետության անկախության 30 ամյակի առթիվ:

«1+1» թերթի խմբագրություն

ՄԵՐ ԵՐԱՋԱԾ ԱՊԱԳԱՆ, 2071Թ.

Հարգելի՛ երեխաներ ու ծնողներ, այսօր կխոսենք Հայաստանի ապագա կրթական համակարգի մասին: 2071 թվականի հունիսի 16-ն է, Հայաստանի կրթության և գիտության նախարար Մոնթե Դարբինյանը հյուրընկալել է Գեղարքունիքի մարզային դպրոցական «1+1» թերթի խմբագրությանը:

Հարց- Պարո՞ն նախարար, ինչքանո՞վ է Հայաստանի կրթական համակարգը համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Պատասխան- Քանի որ դպրոցական ծրագրեր կազմելը շատ բարդ խնդիր է, ուստի յուրաքանչյուր դասագիրք կամ տեսանյութ պետք է անցնի մի շարք մասնագետների (հոգեբանների, մաթեմատիկների, քաղաքագետների և այլն) ձեռքի տակով, քանի որ այդ նյութերով և ծրագրերով են ձևավորվում և կայանում մեր ապագա քաղաքացիները, և այդ ամբողջ փորձաքննությունը անցկացվում է Ամերիկայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ֆինլանդիայի գիտական բուհերի անմիջական համագործակցությամբ: Կարող եմ ասել, որ այդ բոլոր կապերը փոխադարձ են:

Հարց- Պարո՞ն նախարար, ինչո՞վ են տարբերվում մեր այսօրվա դասագրքերը և տեսանյութերը 50 տարի առաջ եղած դասագրքերից:

Պատասխան- Ես կփորձեմ օրինակի վրա տալ ձեր հարցի պատասխանը: Ես երեկ աշխատանքից տուն վերադառնալիս ստացա կնոջս ուղարկած ցուցակը. նա խնդրեց՝ մտնեմ խանութ և գնեմ ինչ-որ լվացքի փոշի, իհարկե, ասաց թե ինչ, բայց մինչև ես հասա խանութ, մոռացա

անունը: Անցնելով ապրանքատեսակով հարուստ խանութի հազար ու մի լվացքի փոշիների շարքով՝ կամա թե ակամա մտովի լսեցի գովազդի ազդեցության դերը մեր գիտակցության վրա: Ես դա չեմ սիրում լսել, բայց ես գնեցի այն լվացքի փոշին, որը գովազդում էր հեռուստացույցը: Դա նշանակում է, որ դասագրքերը և տեսանյութերը կարող են մեզ ուղղորդել ինչպես դեպի պրոգրես, այնպես էլ կարող են հասցնել դեգրադացիայի (հետնահանջ):

Ինչ վերաբերում է մեր պետության վաղ շրջանի դասագրքերին՝ դրանք ուղղորդված էին այն գաղափարախոսությամբ, որով մենք չկարողացանք կազմակերպվել, մնացինք մասնատված, օտարի շահերը գերադասեցինք մեզմից, ստեղծեցինք վախի մթնոլորտ, փակվեցինք կաղապարի մեջ, ատեցինք միմյանց, բայց, իհարկե, դժվարությամբ հաղթահարեցինք այդ դժոխքը:

Հարց- Պարո՞ն նախարար, ինչպե՞ս է խրախուսվում դպրոցներին կից էքսպերիմենտալ(փորձարարական) հողամասերում երեխաներին ներգրավելը:

Պատասխան- գաղտնիք չէ, որ մեզ բոլորիս պետք է ակտիվ առօրյա, մեր նպատակն է երեխաների մոտ սերմանել այն մոտեցումը, որ նա ստեղծագործի, այսինքն՝ դպրոցական տարիներից զբաղվի գիտությամբ: Դրա համար էլ այդ հողամասը նույն լաբորատորիան է, որտեղ երեխան իր ձեռքով ստանում է արդյունք, որը կարող է լինել կամ արդյունավետ կամ ոչ այդքան, այսինքն՝ դա լաբորատորիա է բաց երկնքի

տակ:

Հայաստանի բոլոր դպրոցներում կան 5-10 տարբեր բնագավառների լաբորատորիաներ, որտեղ մեր երեխաները զբաղվում են գիտությամբ՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, հոգեբանություն և այլն, և նրանք համագործակցում են աշխարհի շատ երկրների դպրոցների հետ:

Հարց- Պարո՞ն նախարար, ծնողները չե՞ն բողոքում, որ երեխաները շատ են ծանրաբեռնված:

Պատասխան- Իրոք, կան անհանգստացող ծնողներ, որոնց երեխաները ծանրաբեռնված են հազար ու մի խմբակների և լաբորատոր պարամունքներով, բայց գիտական փորձը առաջադեմ երկրներում ցույց է տալիս, որ մարդու ուղեղը ունի ավելի շատ հնարավորություն, քան մենք օգտագործում ենք, դա աշխատում է հօգուտ թե՛ երեխաների և թե՛ ապագա պետական կազմակերպությունների:

Այսօր մեր յուրաքանչյուր շրջանավարտ գիտի 3-5 լեզու, որը թույլ է տալիս՝ ուսումնասիրել աշխարհը և ընդօրինակել ցանկացած լավագույնը:

Հարց- Պարո՞ն նախարար, քսան օր առաջ տեսանք, թե ինչպես Հայաստանի դպրոցական ալգինիստները առաջինը հաղթահարեցին Նեպալում կայացած մրցումներում:

Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:
/շարունակություն էջ 2-ում/

1

Ի Ա Պ Յ ՈՒ Ղ Ը

Իմ գյուղը գեղեցիկ և յուրահատուկ է իր բնության, խորհրդանշական մատուռներով, խաչքարերով, սառնորակ ջրով և հատկապես բնակիչներով: Իմ գյուղը գտնվում է ծայրամասում, բայց իր յուրահատկությամբ չի զիջում ոչ մի գյուղի: Իմ գյուղը շատ քչերին է հայտնի, այն մի փոքրիկ անկյուն է, որտեղ ես ապրում եմ 16 տարի: Երբ սկսվեց չարաբաստիկ պատերազմը, ականատես էի լինում, որ մարդիկ կորցնում են իրենց գյուղը՝ ծննդավայրը, և իմ գիտակցության մեջ հայտնվում էր այն մտավախությունը, որ ես կարող եմ կորցնել ծննդավայրս: Եվ ես գնահատեցի ամեն ծառն ու թուփը, քարն ու ջուրը, քանի որ գիտակցում էի, որ եթե կորցնեմ իմ գյուղը, դրա հետ մեկտեղ կկորցնեմ մանկությանս օրերը, ներկան և ապագան: Ես սիրում եմ իմ գյուղը՝ իր հոգսերով և խնդիրներով հանդերձ:

Գեղեցիկ է իմ գյուղը տարվա բոլոր եղանակներին. գեղեցիկ է ձմռանը, երբ այն բարուրվում է սպիտակ ձյունով, գեղեցիկ է հատկապես գիշերը, երբ փողոցում վառվում են լույսերը և լուսավորում խորը քնի մեջ մտած գյուղը իմ Գեղարքունիքը: Իսկ առավոտյան գյուղի առօրյան լցվում է դպրոց ու մանկապարտեզ իջնող երեխաների զիլ ձայնով: Գյուղում կյանքն էլ ավելի աշխուժացավ, երբ վերջապես բացվեց նորակառույց մանկապարտեզը:

2021 թվականի գարունը մի նոր թարմության, նոր զույներով եկավ՝ անսահման ժպիտ, խինդ ու բերկրանք պարզելով Գեղարքունիքի համայնքի փոքրիկներին: Այո՛, երեխաները, անկախ իրավիճակից, պետք է ուշադրության կենտրոնում լինեն, իրենց լիարժեք և պաշտպանված



զգան, ձևավորվեն որպես անհատներ՝ վաղվա լուսավոր ապագան կերտելու համար: Մանկապարտեզը երեխաների կյանքում դառնում է այն առաջին լուսավոր ու հեթիաթային աշխարհը, որտեղից սկսվում է նրա զարգացումը:

Տիրուհի Խաչատրյան, Սյուզի Դակոբյան

ՄԵՐ ԵՐԱՋԱԾ ԱՊԱԳԱՆ, 2021Թ.

/սկիզբը՝ էջ 1-ում/

Պատասխան- Հայաստանի բոլոր դպրոցներում տեսականորեն և գործնականորեն պարտադիր դասավանդում են ակադիմիան, և մեծ ուշադրություն է դարձվում երեխաների ֆիզիկական պատրաստվածությանը:

Բոլոր մարզերում կան կենտրոններ, որտեղ երեխաները անցնում են մարզական հավաքներ: Ակադիմիան հանրապետական դպրոցական կենտրոնը գտնվում է Գեղարքունիքի մարզում այն պատճառով, որ մարզը ունի լեռնային սահմաններ ոչ բարեկամ պետության հետ: Մեր երեխաները սիստեմատիկ կազմակերպվող հավաքների ժամանակ իսկապես տեսնում են անցնում ամբողջ սահմանի երկայնքով, ուսումնասիրում են տեղանքը, և այդ միջոցառումը շատ կարևոր է երեխաների հոգևոր աշխարհի ձևավորման գործում: Նման միջոցառումները բացահայտում են առաջնորդների, ովքեր աշխատում են մեր հայրենիքի տնտեսության տարբեր բնագավառներում: Ակադիմիայի կան խմբի երեխաները վարպետորեն տիրապե-

տում են տեղանքին կողմնորոշվելուն, լեռնագնացությանը, սպորտային, լեռնային հեծանվավազքի, լեռնային մոտոցիկլների և փրկարարական այլ տեխնիկաների կառավարմանը: Ընդհանրապես մեր երեխաներին աշխարհում կայացած այդ մրցումներին արժանացած բարձր մրցանակի առթիվ: Դա խոսում է այն մասին, որ քրտնաքան աշխատանքն ու պրոֆեսիոնալիզմը հաջողության հասնելու զրավականն են:

Հարց- Պարո՞ն նախարար, ո՞րն էր այն բեկումնալից քայլը, որ մեր հանրակրթության պետական համակարգում կարողացանք գրանցել առանձնաբաց:

Պատասխան- Երբ մենք պարտվեցինք 2020 թվականի պատերազմում, և 2021-2022 թվականների մի շարք սահմանափակումները ցույց տվեցին, որ ինչպես բանակում, այնպես էլ պետական համակարգում չկան բավարար քանակությամբ մոտիվացված առաջնորդներ, այդ տարիներից ի վեր դպրոցական համակարգը սկսեց իր ձևափոխումը՝ համագործակցելով աշխարհի առաջավոր

դպրոցական համակարգերի հետ, և կազմվեցին նոր ցանկեր ու տեսանյութեր, որոնք երեխայի մոտ ձևավորում են ազատ քաղաքացու գաղափարը առանց բռնության և ատելության պատրաստ զլխավորելու ու փոխելու մեր հայրենիքը ու աշխարհը այդ գաղափարներով: Մյուս ամենակարևոր հանգամանքը տարբեր լեզուների տիրապետելն էր, որը հնարավորություն էր տալիս առցանց անցկացնել դասեր աշխարհի առաջադեմ ուսուցիչների մասնակցությամբ:

Հարց- Պարո՞ն նախարար, Դուք ի՞նչ կցանկանալիք ասել 2021թվականի մեր շրջանավարտներին:

Պատասխան- Հարգելի՛ երիտասարդներ, լսե՛ք ձեր ներքին ձայնը, ձեզ տրվել են այն անհրաժեշտ գիտելիքներն ու փորձը, որով դուք կարող եք հավասարապես սովորել Ամերիկայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի և աշխարհի առաջավոր բուհերում և ստացած այդ գիտելիքները հետագայում օգտագործեք մեր հայրենիքի հզորության ամրապնդմանը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» մարզային դպրոցական թերթի խմբագրությունը կազմակերպել էր մոնիթորինգ «Կրթություն և համերաշխություն» արհմիության աշխատակիցների հետ, որին մասնակցում էին ուսուցիչներ, մանկապարտեզի աշխատակիցներ, ուսանողներ, աշակերտներ և համայնքի բնակիչներ:

Մոնիթորինգը նվիրված էր աշխատանքային իրավունք թեմային՝ աշխատանքային հարաբերություններ, աշխատանքային պայմանագրեր, իրավական կարգավորում, աշխատանքային կողմեր:

«Կրթություն և համերաշխություն» արհմիության աշխատակիցները մանրամասն ներ-



կայացրին, թե աշխատանքը ինչպիսի կարևոր դեր է խաղում հասարակության մարդու կյանքում: Աշխատանքի իրականացումը կարևոր նշանակություն ունի մարդու արժանապատվության և ինքնահարգանքի ապահովման համար: Աշխատանքային իրավունքի հիմնական աղբյուրն աշխատանքային օրենսգիրքն է, որը կարգավորում է աշխատանքային հարաբերությունները՝ աշխատանքային պայմանագիրը, աշխատանքային պայմանագրի լիարժեք լինելը, աշխատանքային կարգապահությունը, վեճերի լուծման կարգը:

Իրենց հետաքրքրող հարցերին ներկայները ստացան սպառիչ պատասխաններ:

ԻՄ ՏԱՏԻԿԸ



Աշխարհում ամենաբաղդր բառը տատկն է: Աշխարհում չկա մի այնպիսի երեխա, ով չգնահատի տատկի գործն ու դերը իր կյանքում: Ես սիրում եմ իմ տատկին՝ իր բոլոր լավ և վատ բնավորության գծերով հանդերձ: Ես նրանից շատ բան եմ սովորել: Սովորել եմ լինել ազնիվ, բարի, օգնել այն մարդկանց, ովքեր իմ օգնության կա-

րիքն ունեն: Գնահատել այն, ինչ ինձ տրված է Աստծու կողմից: Դրա համար ես ամեն օր շնորհակալություն եմ հայտնում Աստծուն այն ամենի համար, ինչ ունեմ և այն ամենի համար, ինչ կարողանում եմ անել: Ես կյանքիցս էլ շատ եմ սիրում ու պաշտում իմ տատկին: Նա ինձ համար իսկական աստվածուհու մարմնավորում է: Նա ինձ համար շատ բան է արել, դրա համար ես նրան սիրում եմ ամբողջ հոգով ու մարմնով: Երբ փոքր էի, նա ինձ համար կարողում էր հեթիաթներ, կազմա-

կերպում խաղեր: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա նա իմ ամեն օրը տոն է դարձնում: Ես մեծ սիրով ու հարգանքով եմ հետևում իմ տատկի խորհուրդներին, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի մեծ իմաստ: Հարգե՛ք ձեր տատկներին, քանի որ նրանք մեծ դեր ունեն մեր կյանքում:

Սիրում եմ քեզ, իմ տատկի:

Նաթելա Սաֆարյան

ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՐԻ ԱՄԱՌԸ

Մեծ հույսերով և անհամբերությամբ սպասում էի ամառային արձակուրդներին: Ճիշտ է, այն մի փոքր ուշ սկսվեց, սակայն չխանգարեց ինձ՝ անմոռանալի հանգիստ ունենալու համար: Դեռ ամառը չսկսած՝ ծոռոցներիս անդադար խնդրում էի, որ արձակուրդները գյուղից դուրս անցկացնեմ, քանի որ միշտ երազել եմ ամառս հանգիստ ու ծովափնյա մի երկրում անցկացնելու մասին, սակայն դեռ հնարավորություն չեմ ունեցել: Այս տարի այնպես ստացվեց, որ հնարավորություն ստացա մեկ շաբաթով երևան գնալու: Այնտեղ անցկացրած առաջին երկու օրերին գյուղի մասին չէի ինչու, կարծես քաղաքի ամբոխն ու տեսարժան վայրերը մոռացնել էին տալիս բնակավայրս: Մի քանի օր անց երևանի շոգն ու անտանելի եղանակը ստիպեցին կարոտել գյուղի գով ու մաքուր օդը, երբ ցանկանում էի դրսում անցկացնել օրս ու վայելել օդի մաքրությունն ու պարզությունը: Ամեն անգամ ընտանիքիս հետ գրուցելիս հարցուփորձ էի անում գյուղի անցուդարձի, նորությունների մասին: Մի քանի օր ևս քաղաքում անցկացնելուց հետո հասկացա, որ այն գյուղի կենցաղը, որ ծանձրալի էր մի ժամանակ, այժմ կարոտում եմ: Քաղաքին մի լավ ծանոթանալուց հետո եկավ այն սպասված օրը, որ պետք է վերադառնայի իմ փոքրիկ գյուղը՝ կարոտած ու մի փոքր ոգևորված, որովհետև զարմանալի էր, որ մի օր կարող եմ կարոտել փոքրիկ ու հնացած տունս, գյուղի բնակիչներին, ովքեր ամբողջ օրը մխրձված էին իրենց ամառային գործերի մեջ:

Գյուղ վերադառնալուս պես առաջին բանը որ գրավեց ինձ, նորաբաց մանկապարտեզն էր, որը տեսնելուս պես հիշեցի մանկությունս, երբ չկար վերանորոգված ու գեղեցիկ մանկապարտեզ, և տեսնելով փոքրիկների ուրախ

ժպիտները՝ չես կարող չերջանկանալ այդպիսի մեծ ձեռքբերման համար: Ծանապարհին տեսա մի խումբ տղամարդկանց, ովքեր գյուղի մի հատվածում հավաքվել ու քննարկում էին աշխարհի անցուդարձը: Մի ամսը բեռնատար մեքենաներով խոտհնձից էին վերադառնում, հաշվի չառնելով տարվա երաշտը, յուրաքանչյուրը ձմեռվա ապրուստի միջոցն էր փնտրում: Մի խումբ կանայք՝ հոգնած ու տանջված, բայց ծիծաղելով ու գրուցելով, բախերը ձեռքներին հողամաս էին բարձրանում: Ճիշտ է, նրանք երիտասարդ էին, սակայն նրանց դեմքի կնճիռները ստվեր էին գցում իրենց երիտասարդ ու հոգաշատ կյանքի վրա:

Ամառվա ձեռքբերումներիցս մեկը բնությանն ավելի մոտիկից ծանոթանալն էր: Մի շատ գեղեցիկ օր ընկերներիս և ուսուցիչներիս հետ արշավ կազմակերպեցինք դեպի Ամդախակ լեռը՝ լեռան գեղեցկությանը ծանոթանալու համար: Մենք հաճախ ձգտում ենք դեպի դուրս՝ բարձր գնահատելով օտարի ստեղծած բարիքներն ու մշակութային արժեքները, բայց այն, ինչ մեր բնությունն է ստեղծել, մարդկային ոչ մի էակ իր ձեռքերով չի կարող արարել: Այն, ինչ ես ունեմ և այն, ինչը որ ես տեսա, չեմ կարող համեմատել աշխարհում ոչ մի հարստության հետ: Մենք պետք է սովորենք տարբեր լեզուներ աշխարհը ճանաչելու համար, որպեսզի կարողանանք գնահատել մեր ունեցածը:

Պատերազմը և սովորեցրեց գնահատել այն, ինչ ունենք, քանի որ կարող ենք մի օր կորցնել ամենաթանկը, և այդ ամենաթանկը հայրենիքն է: Ամառս լեցուն էր նոր բացահայտումներով և, ամենակարևորը, ձևավորված նոր աշխարհընկալումով: Սիրե՛ք և գնահատե՛ք մեր լեռնաշխարհը:

Սյուզաննա Ավետիսյան

ԴՊՐՈՑԻ ՓՈՔՐԻԿ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԸ

2021 թվականին «10 միլիոն ծառ» համապետական ծառատունկի ժամանակ Գեղարքունիքի համայնքապետարանի կողմից նվիրաբերված 106 խորհրդանշական ծառերով հիմնեցիներ դպրոցական այգին, բայց այնտեղ՝ հեռվում, մի փոքրիկ հողակտոր մնաց անմշակ, մնաց ստվերում, ու իմ հուշերում արթնացան «Կախարդական լավաշը» մուլտֆիլմի փոքրիկ հողակտորն ու Նաղաշի կախարդական լավաշը:

Ես խնդրեցի իմ ուսուցչին, որ մեզ օգնի՝ այդ խոպան հողից ստանալ մի կախարդական հողակտոր, որի բարիքներից կօգտվեն դպրոցի բոլոր աշակերտները: Ուսուցիչս բարի ժպիտով ընդունեց իմ առաջարկը. այդ ժպիտում արտացոլված էին միմի այգի հիմնելու գաղափարի շուրջ հավաքված բոլոր մարդկանց ժպիտները:

Կարծես թե այս գաղափարը մի ձնագնդի լիներ, որը պտտվելով մեծանում էր և իր շուրջն հավաքում մարդկանց, որոնցից յուրաքանչյուրը իր ձեռքն էր մեկնում՝ մեկը հողը փխրեցնելով, մեկը սերմացու տրամադրելով, մեկը քաղահան անելով, մեկը մշակելու գործին մասնակցելով, մեկը ոռոգմանը մասնակցելով, մեկը բեր-



քահավաքին աջակցելով, և այս բոլոր «մեկերը» միասին դարձան մեկ ամբողջություն:

Մինի այգին մեզ համար դարձավ ոչ միայն բերքատու այգի, որից կարելի է սնունդ ստանալ, այլև համախմբման աղբյուր: Մենք համախմբվեցինք, դարձանք մի բռունցք, մի ողջ

բազմություն՝ նույն բարի նպատակի համար ծառայող, որը սովորողների համար հայրենի հողերը չկորցնելու լավագույն օրինակ էր:

Աշուն է: Շուտով բերքահավաք է, պատրաստվում ենք դպրոցական «Փռի փառատոնին», որը նվիրված է լինելու դպրոցական այգուն, քանի որ փռի /այրված աթարի մոխրի մեջ եփված կարտոֆիլ/ համար օգտագործելու ենք այգուց հավաքած կարտոֆիլը և այսպես եզրափակելու ենք այգու բերքահավաքի աշխատանքները:

Ձեզ մեծ սիրով հրավիրում ենք մեր այգի, մեր խոհանոց՝ դառնալու մեր համ ու հոտի լավ ընկերը, քանի որ մեծ հույսեր ունենք, որ հաջորդ տարի ևս կմշակենք ու կընդլայնենք մեզ համար սիրելի դարձած դպրոցական այգին, հողագործական աշխատանքներից ստացած «բաջագործություններով» կուրախացնենք մեր տա-տիկներին ու պապիկներին, իսկ իրենց հաջողված փորձը կբերենք մեր այգի: Թող կախարդական փայտիկը Ձեր հրաշագործ գրիչը ուղղի մեր դպրոց, մեր նոր, բայց այսքան սիրելի դարձած այգի, նոր եռանդ ու թափ հաղորդի մեր փոքրիկ, բայց հաստատ քայլերին:

ՓՈՔՐԻԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Գեղարքունիքցիներիս համար մեր գյուղը ոչ միայն ծննդավայր է, այլ նաև հայրենիք է, օդ է ու ջուր: Շատերը «գյուղ» բառը լսելիս պատկերացնում են աշխարհից կտրված, ժամանակակից հնարավորություններից զուրկ մի տարածք, որտեղ մարդիկ անտեղյակ են ամեն ինչից: Այդ պատճառով էլ մենք աշխարհին ասելու ու ցույց տալու բաներ շատ ունենք, որպեսզի բոլորն իմանան, որ գյուղը երբեմն կարող է հազար անգամ ավելին արժենալ և հազար անգամ ավելի գեղեցիկ լինել, քան ուրիշները կարող են պատկերացնել:

Լավագույնը, որից կարելի է սկսել, գյուղի սքանչելի բնությունն է, որը հաստատ բացահայտման կարիք ունի, և հենց այդ բացահայտումների հույսով և սպասումով էլ «1+1» թերթի արշավախումբը աշակերտների փոքրիկ խմբով, աջակից ուսուցիչների և համայնքի ներկայացուցիչների ուղեկցությամբ մեկնեց Սպիտակասար բացահայտելու և բոլորին ցույց տալու մեր գողտրիկ անկյունը, որին ինքներս էլ այդքան լավ ծանոթ չէինք:

Գյուղից հորիզոնին նայելիս նշմարվում է մի գեղեցիկ լեռ՝ թաքնված կաթնագույն մշուշի տակ, այն անհասանելի էր թվում, սակայն դարձավ մեր փոքրիկ ճանապարհորդության գլխավոր կայանատեղին: Լեռան անունը Սպիտակասար է: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական



հատվածում՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին: Բարձրությունը՝ 3555 մետր է: Այն հրաբխային լեռնազանգված է, Գեղամա լեռների երկրորդ զագաթն է Աժդահակից /3597մ/ հետո, հարաբերական բարձրությունը արևմուտքից ու արևելքից՝ համապատասխանաբար 250 մետր և 450 մետր: Գագաթային մասն առատ է թափանցիկ ու մոխրագույն օբսիդիանով, որից էլ ծագում է անվանումը: Սպիտակասարի արևմտյան լանջերից սկիզբ են առնում Գողթ և Ագատ գետերը: Արևելյան լանջերը մասնատված են խոր հովիտներով: Գմբեթաձև է կազմված լիպարիտներից, վանակատներից ու պեռլիտներից:

Շատ խորհրդավոր և գեղեցիկ է չէ՞ հնչում: Եվ այս հրաշքը գտնվում է Գեղարքունիք գյուղում: Սպիտակասար բարձրանալու ճանապարհին

փոքրիկ լճակները, նկարվեցինք, հիասքանչ ժամանակ անցկացրինք և նորանոր մտքերով վերադարձանք գյուղ: Սպիտակասարը հիասքանչ տեղ էր հագստանալու և լավ ժամանակ անցկացնելու համար, և մենք իսկապես հիանում էինք շրջապատող բնությամբ, սակայն ունեցած գեղեցկությունը հարկավոր է ոչ միայն վայելել, այլև կիսվել դրանով: Տուրիզմը գյուղում զարգացնելը օգուտ կլինի ոչ միայն գյուղի և գյուղացիների, այլև ողջ երկրի համար, քանի որ պատերազմից հետո տիրած բարդ իրավիճակը հաղթահարելու համար յուրաքանչյուրս պետք է ունենա իր ներդրումը: Սա մեր ճանապարհի սկիզբն է, մենք դեռ նոր բացահայտումներ ենք անելու և մեր գյուղը տեսանելի ենք դարձնելու բոլորի համար:

Մերի Գրիգորյան

ՊԱՐՏԲՄ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» մարզային դպրոցական թերթի խմբագրությունը և մանկավարժական խորհուրդը բարի ծառայություն են մատուցում մեր դպրոցի շրջանավարտներներին՝ նորակո-

չիկներ Աշոտ Կարենի Բաղայանին, Աշոտ Ռուբիկի Գրիգորյանին, Հենրիկ Հովհաննեսի Հարոյանին, Գրիգոր Արթուրի Ոսկանյանին և բարի վերադարձ են մատուցում հայրենիքին իրենց պարտքը կատարած և տուն

վերադարձած Արթուր Ռաֆիկի Ավդալյանին, Արտյոմ Պարզևի Աղաջանյանին, Խաչիկ Սարգսի Ավետիսյանին, Սաշա Հակոբիկի Հակոբյանին:

3

ԲԱՍԿԵՏԲՈՒՆԻ ԳՆԴԱԿԻ ԱՂՋԻԿԸ

Մի աղջիկ կար, ով ապրում էր Զինաստանում: Նա ծագումով Յունան նահանգից էր: Նա շատ խելացի ու անուշիկ աղջիկ էր: Ապրում և մեծանում էր աղքատ ընտանիքում:

Մի անգամ ընտանիքով ինչ -որ տեղ գնալիս նրանք ավտովթարի են ենթարկվում: Այդ ժամանակ նա ընդամենը չորս տարեկան է լինում: Աղջիկը, իհարկե, ողջ է մնում, բայց զրկվում է երկու ոտքերից: Այդքանից հետո նույնիսկ նա իր մեջ ուժ է գտնում և շարունակում ապրել:

Մենք հաճախ ենք լսում այս խոսքերը՝ մի՛ հանձնվիր, բայց դա երբեմն կարող է պարզապես խոսք լինել: Աղջկա անունը Յյան Զոնգյան էր: Նա իր ուժեղ կամքով կարողացել է ոգեշնչել հաշմանդամություն ունեցող շատ մարդկանց: Արդեն ասացի, որ նրանք շատ աղքատ էին, դրա համար էլ ընտանիքը նրան չի կարողանում ապահովել պրոթեզներով: Ինչ -որ տեղ գնալու համար նրան ծնողները տանում էին գրկած՝ ձեռքերի վրա: Նա հաճախում էր դպրոց: Այն ճանապարհը, որը աղջիկը պետք է անցներ յոթ րոպեում, անցնում էր մեկ ժամում: Ծնողները չէին կարողանում նրան ապահովել պրոթեզներով, սակայն նրա պապիկը գտնում է Յյանին օգնելու հնարը: Նա իր հարազատներից խնդրում է բասկետբոլի գնդակ: Այն, ինչ ասելու են հիմա, իսկապես կցնցի ձեզ: Պապիկն այնքան տարված էր թոռանն օգնելու մտքով, որ այդպիսի բան էր մտածել: Նա բասկետբոլի գնդակը կտրել էր, թռանը դրել էր գնդակի մեջ և նրան շարժվելու



համար տվել էր շինարարական գործիքներ: Աղջիկն ասում էր, որ իր ընկերները դասերից հետո վազում էին բակ և ցատկոտում: Աղջիկը շատ էր նախանձում նրանց: Նա հինգ տարվա մեջ մաշեցնում է ութ գնդակ: Սակայն կային բարի մարդիկ: 2007 թվականին մամուլի ուշադրության շնորհիվ

աղջկան հրավիրում են Պեկին, որտեղ նա ստանում է պրոթեզներ: Տասնմեկ տարեկանում նա իմանում է, որ չի կարող ուսումը շարունակել իր հասակակիցների հետ: Սակայն գտնում է ելքը և միանում լողի ակումբին: Յյանին հաճախ լրագրողներն անվանել են բասկետբոլի գնդակի աղջիկ: Աղջկան թվում էր, որ ինքը լողալու ընթացքում կարող է խեղդվել, բայց ոչ, գնալով ավելի էր հմտանում: Նա ամեն օր լողում էր տասը կիլոմետր: Նրա մեջ լողալու ընթացքում միշտ էլ վախ կար, բայց նա շարունակում էր մարզվել ու լողալ, քանի որ ցանկանում էր մասնակցել պարաօլիմպիկ խաղերին: Դրա համար նա պատրաստ էր օրվա մեջ լողալ նույնիսկ չորս ժամ:

2013 թվականին, երբ Յյանը տասնութ տարեկան էր, ստանում է մեծահասակի գիպսեր: Շատ շուտով մասնակցում է մրցումների ու խաղերի և հաճախ դառնում հաղթող: 2010 թվականին աղջկան հրավիրում են Ռիո դե Ժանեյրոյի պարաօլիմպիկ խաղերին: Նա մասնակցում է այդ խաղերին, որտեղ չի հաղթում, բայց մտնում է հաղթողների առաջին տասնյակի մեջ: 2020 թվականին նա նորից մասնակցում է խաղերի, որոնք տեղի են ունեցել Տոկիոյում: Նա այժմ 21 տարեկան է: Եվ ես վստահ եմ, որ նրան շատ շուտով ոչ միայն կանվանեն բասկետբոլի գնդակի աղջիկ, այլ նաև նա կդառնա աշխարհի բազմակի չեմպիոն:

Նաթելա Սաֆարյան

ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄ

Այս գրույցը մեզ է հասել շատ վաղուց: Մեզ պատմել են մեր տատերը, մեր տատերին պատմել են իրենց տատերը:

Հագարավոր տարիներ առաջ, երբ մեր աշխարհը նոր էր ծնավորվում, չկար արև, ու շատ ցուրտ էր, որպեսզի կենդանական և բուսական աշխարհը կարողանար գոյատևել ու բազմանալ, արևի աստվածը վառում էր կրակ իր ձեռքերի մեջ, լուսավորում էր և ջերմություն տալիս մարդկանց ու բնությանը: Այսպես կյանքը ընկնում էր իր բնական հունի մեջ: Մարդիկ շատ երախտապարտ էին և իրենց զոհունակությունն էին հայտնում աստվածներին: Արևի, քամու, քրի, լուսնի և շատ ու շատ աստվածներ օգնում էին մարդկանց, աշխատում նրանց օգտին, և մարդիկ շատ էին սիրում աստվածներին ու զոհաբերություններ անում նրանց պատվին: Սակայն ժամանակ առ ժամանակ աստվածները ցանկանում էին, որ մարդիկ իրենց համար զոհաբերեն ամենաթանկը, ինչը որ նրանք ունեին:


Այդ ժամանակներում մեր գյուղում ապրում էր Սաղաթել անունով մի մարդ, ով ուներ 3 աղջիկ, նրանք շատ սիրում էին և հմուտ իրենց գործերում: Սաղաթելը գիտեր, որ մի օր իր չքմաղ աղջիկներին պետք է զոհաբերի աստվածներին ու որոշեց գտնել զորեղ փեսացուների և ամուսնացնել իր աղջիկներին, նրանք կունենան զեղեցիկ, ուժեղ և հնարամիտ երեխաներ. մարդիկ նրանց կսիրեն ու կհարգեն ինչպես աստվածների:

Աստվածներին դուր չէկան այդ ինքնավստահությունը և մարտահրավերը, և նրանք տարան Սաղաթելի երեք աղջիկներին: Մեծ աղջկա անունը Արևիկ էր, նրան արևի աստվածը տարավ երկինք, որ ամեն օր՝ առավոտից իրիկուն, լուսավորի ու ջերմացնի մութ ու ցուրտ աշխարհը: Միջնեկ աղջկա անունը Աստղիկ էր, նրան տիեզերքի աստվածը տարավ տիեզերք, որ կարողանար աստղերի միջոցով կոդմորոշել մարդկանց:

Փոքր աղջկա անունը Լուսին էր, նրան բերք ու բարիքի աստվածը տարավ մեզ ամենամոտիկ մոլորակը, որ նա իր լույսով կարողանար մեզ հուշել սպասվող թե՛ առատությունը, թե՛ աղետը:

Սաղաթելը չդիմացավ այդ վշտին և մահացավ: Աստվածները հրամայեցին, որ նրան թաղեն մեր գյուղի վերևում, որտեղ այսօր գտնվում է վանքը, որպեսզի նրա գերեզմանը ուղղված լինի դեպի Սպիտակասար, որ նա երբեք չկարողանա տեսնել հիասքանչ լուսաբացը ու որ միշտ տեսնի այն աղջիկներին, որոնց տանում էին զոհաբերելու քրի աստծուն Սպիտակասարի փեշերին, որտեղից սկիզբ է առնում Գավառագետը:

«1+1» թերթի խմբագրություն



**ԿՐԻՐ
ԴԻՄԱԿ,
ՓՐԿԻՐ
ԿՅԱՆՔԵՐ**



Աճյա Գևորգյան

4

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 09. 2021 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան
Տպագրանակ՝ 2000
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru
Կայք էջ՝ 1u1.hay, 1u1.am